



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6**

29 ՀՈՒՆԻՍԻ 2020թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու բոլոր անդամներ:

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը և առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը**

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը**

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 29-ի թիվ 6 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 6 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի որոշ աշխատակիցների 2020 թվականի հունիս ամսից պարապուրդի մեջ համարելու մասին:
3. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 27-ի թիվ 05-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում փոփոխություններ կատարելու մասին:
4. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 25-ի թիվ 51 որոշման բովանդակության մեջ փոփոխություն կատարելու մասին:
5. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հատուկ նշանակության 0.87213 հա հողի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
6. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.1 հա այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:
7. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Ռաֆայել Անուշավանի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.1 հա վարելահողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
8. Գլաձոր համայնքի գույքային հաշվեկշռում լրացումներ կատարելու մասին:
9. Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
10. Կամավոր խնդրի լուծման իրականացմանը համաձայնություն տալու և ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:
11. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի բնակիչ Գուրգեն Նաիրիի Գալստյանի ընտանիքին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:
12. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի մի խումբ բնակիչների կողմից ներկայացված դիմումի քննարկման մասին:
13. Գլաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի «Աշրի դուզ» կոչվող հանդամասում, և Վերնաշենի օրվա կարգավորիչ ջրամբար տանող ճանապարհի եզրին գտնվող չօգտագործվող խողովակաշարերը համայնքի գույքային հաշվեկշռում գույքագրելու և օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:
14. Գլաձոր համայնքի (բնակավայրերի) վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից աճուրդով օտարելու համար համաձայնություն տալու մասին:
15. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի բնակիչ Ալինա Կարապետյանի կողմից ներկայացված դիմումի քննարկման և ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին: